ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱԶՈ» (ԱԺՁԱՐՈՒՅԶԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 93 - 94 (16590) ՇԱԲԱԹ, 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻ ՈՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ



Նոյեմբերի 24-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Բրյուսելում մասնակցեց «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովին:

Ելույթ ունենալով գագաթաժողովի լիագումար նիստին՝ Վրաստանի վարչապետը անդրադարձավ վերջին տարիներին Վրաստանում իրականացված բարեփոխումների եւ դրանց իրականացման ընթացքում ձեռքբերումների հարցին:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետն անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ: Հանդիպմանը կողմերն ընդգծեցին այն առաջընթացը, որը վավերացվել է Վրաստանում եվրահինտեգրման ճանապարհին, Վրաստան-Եվրամիություն համագործակցության զարգացման դինամիկան:

Անդրադառնալով «Արեւելյան գործընկերության» ձեւաչափին՝ կողմերը նշեցին Վրաստանի ակտիվ մասնակցությունը համագործակցության խորացման գործում, ընդգծեցին Եվրամիության հետ հարաբերությունների խորացման 2017-2020 թվականների ծրագրի իրականացման կարեւորությունը: Դոնալդ Տուսկի հավաստմամբ, Վրաստանի Եվրամիության հուսալի եւ օրինակելի գործընկերն է:

Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակին: Դոնալդ Տուսկը դրական գնահատեց Վրաստանի կառավարության՝ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված քաղաքականությունը եւ ընդգծեց այդ հարցում Եվրամիության դերի նշանակությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է»

Հայաստանի նախագահը նոյեմբերի 24-ին Բրյուսելում ելույթ ունեցավ Եվրամիության Արեւելյան գործընկերության գագաթնաժողովում:

Իր խոսքում, անդրադառնալով Հայաստան-Եվրամիություն համաձայնագրին, Հայաստանի նախագահը նշեց, որ այն սոսկ նոր իրավական փաստաթուղթ չէ, այլ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վրա խարսխված այն արժեհամակարգի արտացոլումը, որը մենք դավանում ենք:

- 2017 թվականն իրավամբ կարելի է համարել Հայաստան-ԵՄ հարաբերությունների քառորդդարյա պատմության կարեւոր հանգրվաններից մեկը, որ նշանավորվում է այսօր՝ այս գագաթաժողովի շրջանակներում, Հայաստան-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրմամբ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱՓԱԹԵԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Նոյեմբերի 20-ին Վրաստանի խորհրդարանի բյուրոյին ներկայացվեց կառավարության կառուցվածքային ծրագրված փոփոխությունների օրինանախագծի փաթեթը:

«Վրաստանի կառավարության կառուցվածքի, իրավասությունների եւ գործունեության կարգի մասին» օրենքում իրականացվելիք փոփոխությունները եւ դրանից ծագող օրինանախագծերը, որոնք նոյեմբերի 15-ին հավանության են արժանացել Վրաստանի կառավարության նիստում, հաստատման համար ներկայացվեցին երկրի օրենսդրական մարմին:

Հիշեցնենք, որ, կառավարության որոշմամբ, չեղարկվում են չորս գերատեսչություններ՝ էներգետիկայի, բնապահպանության եւ բնական ռեսուրսների պաշտպանության, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունները, ինչպես նաեւ եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման պետնախարարի աշխատակազմը:

Կառուցվածքային փոփոխություններին ծրագրի համաձայն, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությանը միանում է էներգետիկայի նախա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՁՈՒՀՎԵԼ Է ՄԵԿ ՁԻՆՇԱՌԱՅՈՂ, 4-Ը ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ, ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾ ԽՄԲԻ ՄԵԿ ԱՆԴԱՄ , ԵՐԵՔԸ՝ ՉԵՁՈՔԱՑՎԵԼ

Նոյեմբերի 22-ի լուսաբացին, Թբիլիսիի Իսանիի շրջանի Բերի Գաբրիել Սալոսի (նախկին՝ Բոգդան Խմելնիցկու) փողոցում, Վրաստանի պետանվտանգության ծառայության աշխատակիցների կողմից անցկացվեց հակահաբեկչական հատուկ գործողություն:

Գրեթե 20 ժամ տեւած գործողության արդյունքում, հանցավոր խմբի մեկ անդամ ձերբակալվել է, երեքը՝ չեզոքացվել: Գործողության ընթացքում, ուժայիններն ունեն մեկ զոհ եւ չորս վիրավոր:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Նոյեմբերի 24-ին, նախօրոք մշակված ծրագրով, սկսվեց Վրաստանի խորհրդարանի կողմից երկու լսումներով հավանության արժանացած սահմանադրական փոփոխությունների համաժողովրդական քննարկումը:

Համաժողովրդական քննարկումները մեկնարկեցին Թբիլիսիում, երկրի խորհրդարանի շենքում: Քննարկմանը ներկա էին երկրի օրենսդիր եւ գործադիր մարմինների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Քննարկմանը ելույթ ունեցան Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Վրաստանի սահմանադրական պետական հանձնաժողովի անդամներ:

Իր խոսքում, խորհրդարանի խոսնակը խոսեց երկրում ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման հարցում սահմանադրության նոր խմբագրության դրական նշանակության մասին: Ի պատասխան ընդդիմախոսների, Իրակլի Կոբախիձեն հայտարարեց.

- Եթե համեմատեք սահմանադրության գործող տեքստն ու նրա նոր խմբագրությունը, ապա չեք գտնի ոչ մի հոդված, որով կառավարող կուսակցությունը բարելավում է իր սուբյեկտիվ դիրքերը: Նրա խոսքով, սահմանադրությունում իրականացված ավելի քան 30 փոփոխություններ վկայում են, որ ձեւավորվում է ոչ միայն նոր փաստաթուղթ, այլեւ ժողովրդավարական նոր ավանդույթ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից 11 օր անց, նոյեմբերի 20-ին մունիցիպալիտետներում անցկացվեց նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ նիստը:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքով մշակված աշխատակարգի համաձայն, առաջին նիստում սակրեբուլոյի անդամներն իրենց կազմից ընտրում են սակրեբուլոյի նախագահին, նրա տեղակալներին, օրենսդիր մարմնի հանձնաժողովների ղեկավարներին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱՓԱԹԵԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարությունն ու բնական ռեսուրսների կառավարման բաղադրիչը՝ բնապահպանության եւ բնական ռեսուրսների պաշտպանության նախարարության գործառույթներից:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությանը ավելացվում է սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդության հարցերի բաղադրիչը:

Չեղարկվող սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության սպորտի բաղադրիչը ավելացվում է մշակույթի նախարարության գործառույթներին:

Բնապահպանության նախարարությանը կցվում է գյուղատնտեսության նախարարությունը:

Խորհրդարանի կողմից օրինանախագծի հաստատումից հետո, Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը կավելացվի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման պետնախարարության գործառույթը:

Միավորման եւ վերակառուցման արդյունքում, ներքին գործերի նախարարությանն առընթեր գործող արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության եւ պետական անվտանգության ու ճգնաժամերի կառավարման խորհրդի բազայի վրա կձեւավորվի արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնը:

Կառավարությունը հանդես է եկել նախաձեռնությամբ, ըստ որի, հետախուզության ծառայությունը միավորվելու է պետական անվտանգության ծառայությանը:

Ինչպես տեղեկացրել են Վրաստանի կառավարությունից, նախարարություններում իրականացվող փոփոխություններին զուգընթաց, կառուցվածքային փոփոխություններ կիրականացվեն նաեւ հանրային իրավունքի իրավաբանական անձանց (ՀԻԻԱ) կառույցներում:

ՆՈՐ ԴԵՄՔԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, կառավարության կառուցվածքային փոփոխությունների իրականացման արդյունքում, չեղարկվեց պետական հինգ գերատեսչություն: Փոփոխություններ կատարվեցին նաեւ կադրերի հարցում, կառավարությունում կան նոր դեմքեր: Մասնավորապես, ֆինանսների նախարարի պաշտոնում առաջադրվեց Մամուկա Բախտածեի, իսկ կրթության նախարարի պաշտոնում՝ Միխեիլ Չխենկելու թեկնածությունը:

Ստորեւ ներկայացնում ենք նշանակված նախարարների հակիրճ կենսագրականները.

Մամուկա Բախտածե.- 35 տարեկան է: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը, ունի տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան: Արժանացել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մագիստրոսի աստիճանի, INSEAD բիզնես-դպրոցը նրան շնորհել է MBA որակավորում:

Տարբեր տարիներին՝ որպես նախագծի մենեջեր, գլխավոր տնօրեն է աշխատել «Վրացական երկաթուղի» ԲԸ-ում, եղել է Վրաստանի միջազգային էներգետիկական կորպորացիայի գլխավոր տնօրեն, «Ռչեուլի» հյուրանոցային ցանցի դիտորդական խորհրդի անդամ:

Միխեիլ Չխենկելի.- 49 տարեկան է: Ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկայի ֆակուլտետը, եղել է ակադեմիկոս Մուսխելիշվիլու անվան կրթաթոշակառու: Ուսանել է նաեւ ԱՄՆ-ում, ավարտել՝ Փենսիլվանիայի համալսարանի դոկտորանտուրան, ստացել մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Շուրջ 20 տարի դասախոսել է ԱՄՆ-ի առաջատար համալսարաններում, գիտական եւ մանկավարժական գործունեության համար բազմիցս պարգեւատրվել է: Գիտական մի շարք աշխատությունների հեղինակ է: Հայրենիք վերադառնալուց հետո, շարունակել է գիտական եւ մանկավարժական գործունեությունը: Վերջին տարիներին զբաղեցնում էր Թբիլիսիի պետհամալսարանի պրոռեկտորի պաշտոնը:



ԳԵՐՄԱՆԻԱ
ԿՈԱԼԻՑԻԱ ՉԿԱՁՄՎԵՑ

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության վարչությունը նոյեմբերի 20-ին որոշում է ընդունել Անգելա Մերկելի պահպանողական դաշինքի հետ բանակցություններ չսկսել կոալիցիայի ձեւավորման շուրջ: Այս կապակցությամբ, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հանդես է եկել Բունդեսթագի նոր ընտրություններ անցկացնելու օգտին:

Բացի այդ, Գերմանիայի կանցլերը մերժել է պաշտոնաթող լինելու կոչերը: Ավելի վաղ, Գերմանիայի Ազատ դեմոկրատական կուսակցությունը հայտարարել է կառավարող կոալիցիայի ձեւավորման շուրջ Անգելա Մերկելի պահպանողականների եւ «Կանաչների» հետ փոխզիջման հասնելու անհնարինության մասին եւ լքել է բանակցությունները:

Հիշեցնենք, որ Բունդեսթագի՝ սեպտեմբերի 24-ին կայացած ընտրությունների արդյունքներով, կուսակցություններից ոչ մեկը ձայների մեծամասնություն չի ստացել:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ
ՎԵՃԱՐՈՒՄՆԵՐ՝ Brexit-Ի ԴԻՄԱՑ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյին, ինչպես երեւում է, հաջողվել է հասնել իր նախարարների կաբինետի անդամների, ներառյալ նաեւ կոշտ Brexit-ի կողմնակիցների համաձայնությանը: Եվրամիությունից երկրի դուրս գալու պատճառով Միացյալ Թագավորության կողմից միավորման հանդեպ իր պարտավորությունների չկատարման համար Բրյուսելին կատարելիք վճարումները կրկնապատկել Brexit-ի դիմաց հաշիվը՝ 20-40 միլիարդ ֆունտ ստեռլինգ (22,5 միլիարդից մինչեւ 45 միլիարդ եվրո):

ԶԻՄԲԱԲՎԵ
ՆԱԽԱԳԱՀԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Զիմբաբվեի նախագահ Ռոբերտ Մուգաբեն հրաժարական է տվել: Այս մասին հայտարարել է երկրի խորհրդարանի խոսնակ Յակոբ Մուդենդան:

Իր հրաժարականի նամակում Մուգաբեն շեշտել է, որ որոշումը կայացրել է կամավոր կերպով:

Այս անակնկալ հայտարարությունն արվել է այն ժամանակ, երբ երկրի խորհրդարանը քննարկում էր Մուգաբեի իմպիչմենտի հարցը: Անցած շաբաթ զինվորականների ձեռնարկած քայլերից հետո նույնիսկ, երբ վերջիններս փաստացի վերահսկողություն էին հաստատել քաղաքացիական կառավարության հանդեպ, Մուգաբեն հրաժարվել էր հրաժարական տալ:

Ռոբերտ Մուգաբեն Զիմբաբվեի առաջնորդն է 1980թ. երկրի անկախությունից ի վեր:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«ԳԱԲՐԻԵԼ ԹԱՄԱՄՇՅԱՆ» ԳՐՔԻ ԵՎ ՏԵՍԱՖԻԼՄԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

2017 թվականի նոյեմբերի 19-ին, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնում տեղի ունեցավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանի «Հայ մեծանուն գործարարբարերարներ» շարքից «Թամամշյանցներ. բնիկ թիֆլիսցիների գերդաստանը» գրքի շնորհանդեսը եւ տեսաֆիլմի ցուցադրությունը:

Այնուհետեւ ցուցադրվեց Թամամշյանցների գերդաստանին նվիրված վավերագրական ֆիլմերի տեսաշարի առաջին ֆիլմը:

Հավարտ ֆիլմի, շարունակվեց կարծիքների փոխանակում: Իրենց տպավորությունները եւ ցանկությունները արձանագրեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի հայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեւոսյանը, «Կովկասյան տուն» կենտրոնի լրագրող Վիկտորյա Մաքսուեան եւ ուրիշներ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՆՎՈՒՄ Է ՕՐԵՆՔԻՑ

Ճանապարհային երթեւեկության անվտանգության մասին օրենքից հանվում է այն նորմը, ըստ որի, 2018 թվականից տրանսպորտային միջոցների տեխստուգումը դառնում է պարտադիր:

Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարարության տրանսպորտի եւ լոգիստիկայի դեպարտամենտի ղեկավար Քեթեւան Սալուքվաձեն, սույն որոշումը պայմանավորված է նրանով, որ 2018 թվականի հունվարի 1-ից տեխնիկական պարբերական տեսչությանը կենթարկվեն ավելի քան ութ ուղեւոր տեղափոխող եւ ավելի քան 3,5 տոննա բեռնատարողություն ունեցող ավտոտրանսպորտային միջոցներ:

- Տրանսպորտային այդ միջոցներն այսօր էլ ենթակա են տեխնիկական տեսչության: Տրանսպորտային հենց այդ միջոցներն են հիմնականում աղտոտում մթնոլորտը: Դրանք բոլոր դեպքերում ենթակա են տեխստուգման, սակայն հաշվի առնելով այն, որ ստուգման իրականացման գործընթացում առկա են որոշակի թերացումներ, չափորոշիչը բարձրացվում է եւ մոտեցվում եվրոպական կարգավորումներին: Տեխստուգումը կանցկացվի այլ չափորոշիչներով, երկու տարվա ընթացքում ստուգում կանցնեն բոլոր մեքենաները: Կկազմվի մեթոդաբանություն, թե երբ են անցնելու տեխստուգում,- հայտարարեց Քեթեւան Սալուքվաձեն:

Իր հերթին, Վրաստանի էկոնոմիկայի փոխնախարար Գիորգի Չերքեզիշվիլին հայտարարեց.

- Մենք 2018 թվականի հունվարի 1-ից սկսում ենք բարեփոխումը, եւ առաջիկա երկու տարիների ընթացքում ավտոտրանսպորտային բոլոր միջոցները կենթարկվեն տեխնիկական ստուգման: Այսօր կան ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք տարեկան երկու անգամ անցնում են տեխստուգում, ինչը պայմանավորված է դրանց տեխնիկական բնութագրմամբ: Օրենքից վերոնշյալ հոդվածի հանումը պայմանավորված է նրանով, որ կառավարությունը քննարկելու է տեխնիկական ընթացակարգը ինչպես տեխնիկական տեսչության կենտրոնների, այնտեղ աշխատող մարդկանց, այնպես էլ՝ անմիջականորեն ավտոտրանսպորտի միջոցների համար: Օրենքում սույն գրանցման պահպանումը կհանգեցներ նրան, որ հենց հաջորդ օրը ավտոտրանսպորտային բոլոր միջոցները կտուգանվեին, եւ 1 200 000 ավտոմեքենա մինչեւ հունվարի 1-ը կանցներ տեխստուգում: Այժմ մշակվում է ժամանակացույց, ըստ որի, առաջիկա երկու տարիների ընթացքում բոլոր ավտոմեքենաները կանցնեն տեխստուգում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Թբիլիսիի քաղաքապետարանը մայրաքաղաքի սակրեբուլոյից ետ է պահանջել 2018 թվականի բյուջեի նախագիծը՝ վերանայման նպատակով:

Այդ մասին, նոյեմբերի 20-ի մայրաքաղաքի գործադիր իշխանության նիստում, հայտարարել է քաղաքապետ Կախա Կալաձեն: Նրա խոսքով, Թբիլիսիի սակրեբուլոյին կներկայացվի բյուջեի նոր նախագիծ, որտեղ կնախատեսվեն բոլոր այն նախագծերը, որոնց մասին կառավարող թիմը խոսել է իր նախընտրական ծրագրում:

- Նախընտրական քարոզարշավի շրջանակներում, մենք բնակչությանը ներկայացրինք մեր ծրագիրը, որն, իր հերթին, ներառում է զարգացման քառամյա նախագիծ: Մեր ընտրական ծրագիրը կազմված էր յոթ հիմնական կետերից, եւ դրանցում լրիվությամբ արտացոլված են բոլոր այն հիմնախնդիրները, որոնք այսօր առկա են Թբիլիսիում: Այսօր սակրեբուլոյի հաստատմանը ներկայացված բյուջեի նախագծում մենք փոփոխություններ կատարելու իրավասություն չունեինք, քանի որ մունիցիպալային սակրեբուլոյում չէինք ներկայացված: Հետեւաբար, այժմ դիմում ենք փոխվարչապետին, շարունակել աշխատանքը բյուջեի նախագծի շուրջ, այն է՝ ետ պահանջել սակրեբուլոյից եւ նոր նախագիծը հաստատման ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում: Բյուջեի նոր նախագծում պետք է արտացոլվեն եւ գրանցվեն բոլոր կոնկրետ այն նախագծերը, որոնք ծրագրված են 2018թ. համար,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄՐՑԱՆԱԿՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՂ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 16-ին, Թբիլիսիի «Radisson Blu» հյուրանոցի կոնֆերանսների դահլիճում, Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակը նշեց 1995 թվականից ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ սահմանված Հանդուրժողականության միջազգային օրը՝ «Հանդուրժողականության համար» մրցանակներ շնորհելով լրագրողների եւ այլ գործիչների:

Միջոցառմանը ներկա էին պետական մարմինների, դիվանագիտական առաքելությունների, միջազգային եւ տեղական հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների, կրոնական եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպվել էր Հանրային պաշտպանի գրասենյակի հանդուրժողականության կենտրոնի կողմից, Միավորված ազգերի կազմակերպության ասոցիացիայի՝ «Հանդուրժողականություն, քաղաքացիական գիտակցություն եւ ինտեգրման աջակցության ծրագրի» (PITA) շրջանակներում, ֆինանսավորվող ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից:

Միջոցառումը բացեց Վրաստանի Ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին:

Նրա խոսքով, արդեն ավանդույթ է դարձել այս օրը տոնել պարգեւատրելով «Հանդուրժողականության համար» մրցանակներով:

Այս տարի «Հանդուրժողականության համար» պարգեւատրվեցին գրող **Լաշա Բուգաձեն**՝ «Մեկ երկինք» փառատոնի կազմակերպման, երաժիշտ ու վաստակավոր ուսուցիչ **Մանանա Ալֆաիձեն**, **Խաղաղության Կովկասյան ինստիտուտը, «Կրոնների եւ արվեստի ակումբը»** նախագծի ժողովրդավարության եւ զարգացման համար: Պարգեւատրվել են նաեւ **«Ռուսթավի-2» հեռուստաալիքը** եւ **«Գյուրջիստան» թերթը**, Հանրապետական կուսակցության նախագահ **Խաթունա Սամնիձեն**, խորհրդարանի պատգամավոր **Գիգա Բոկերիան**, հասարակական պաշտոնյաների շրջանում՝ վարչապետի խորհրդական, գրող **Գուրամ Օդիշարիան**: Պատվավոր մրցանակները տրվեցին Ավետարանչական-Լյութերական եկեղեցու եպիսկոպոս **Հանս-Յոհայմ Կիրելենին** եւ «Ոսկե Պրահա» չեխական համայնքի ղեկավար **Հարոլդ Շամպլեին**:

Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված մեդիա մրցույթի հաղթողներն էին «Հարավային դարպաս» թերթի լրագրողներ **Նինո Նարիմանիշվիլին** եւ **Թինաթին Զազաձեն**: Երկրորդ տեղը զբաղեցրեց «Լիբերալ» ամսագրի խմբագիր **Զուրա Վարդիաշվիլին** «Ինչ է մեզ սովորեցնում մայր պատմությունը» հոդվածի համար:

Հանդուրժողականության երեկոյի ընթացքում պարգեւատրվեցին նախօրոք հայտարարված «Վրաստանի էթնիկ բազմազանությունը» մրցույթի համար: Երեք հաղթողներն էին՝ «Առաջին ռադիոյի» լրագրողներ **Կոբա Չոպլիանին** եւ **Գիորգի Գուգուշվիլին**, «Աջարիայի» հեռուստալրագրող **Բաչո Գուրաբանիձեն** եւ Պանկիսիի հանրության ռադիոյի լրագրողներ **Իսլամ Գոգրիշվիլին** եւ **Նազի Դակիշվիլին**:

Հիշեցնենք, որ 2015 թվականին, Հանդուրժողականության միջազգային օրվա առթիվ «Հանդուրժողականության ասպետի» կոչում շնորհվեց «Վրաստան» թերթին:

ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հակահաբեկչական գործողության ընթացքում ձերբակալված, Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող տղամարդուն մեղադրանք է առաջադրվել Վրաստանի Քրեական օրենսգրքի երկու հոդվածներով: Ըստ դատախազության հայտարարության. «Մեղադրանքն առաջադրվել է արտասահմանյան ակաբեկչական կազմակերպությանը միանալու եւ ահաբեկչական գործունեության մեջ վերջինիս օգնություն ցույց տալու, ինչպես նաեւ ահաբեկչության նպատակով ապօրինի հրազեն, ռազմամթերք, պայթանյութեր եւ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, պահելու եւ կրելու համար»: Դատախազության տվյալներով, դա ենթադրում է 10-ից 17 տարի ժամկետով ազատազրկում:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Գախարիան, խոսքը «միջազգային ահաբեկչության փաստի» մասին է, եւ հատուկ գործողության հետաքննութունը վարվում է նաեւ այլ երկրներում:

Նոյեմբերի 22-ին Թբիլիսիի Բերի Գաբրիել Սալոսի փողոցում տեղի ունեցած հատուկ գործողությունների հետեւանքով, առնվազն 8 բնակարան վնասվել է: Դեռ պարզ չէ, թե այդ ընտանիքները կարո՞ղ են, արդյոք, բնակվել իրենց բնակարաններում:

Ինչպես հայտնեցին Իսանիի մունիցիպալիտետի վարչությունում, գույքագրումը դեռ շարունակվում է, եւ վերջնական պատկերը հետագայում հայտնի կդառնա:

- Նախօրեին 8 ընտանիք դիմել է Իսանիի մունիցիպալիտետի վարչություն: Նրանցից 3-ի դիմումը բավարարվել է, 5-ը սպասման մեջ են:

Եթե պարզվի, որ այդ բնակարաններում չեն կարող ապրել, մենք նրանց համար բնակարան կվարձենք,- ասացին վարչությունում:

Նշենք, որ այն բազմահարկ շենքում, որտեղ գրեթե 20 ժամ ընթանում էին հատուկ գործողությունները, ապրում է ընդհանուր առմամբ 72 ընտանիք:

Հատուկ գործողության ընթացքում, երկկողմանի կրակոցներ, պայթյուններ էին տեղի ունեցել, որոնց հետեւանքով, 3-րդ եւ 4-րդ հարկերում գտնվող բնակարաններում հրդեհ է բռնկվել:

Նշենք, որ հատուկ գործողության 20 ժամանոց տեւողությունը, փորձագետները բացատրում են խաղաղ բնակչության շրջանում հնարավոր զոհերի թիվը նվազագույնի հասցնելու միտումով: Եվ ի պատիվ իրավապահների, այդ հարցը կարգավորվեց՝ չնայած, որ գործողությունը իրականացվեց մարդաշատ բնակեցված թաղամասում, խաղաղ բնակչության շրջանում տուժվածներ չկային:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ



ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՇԻՈ ՄՈՒՋԻՐԻՆ՝ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱՆՈՐԴ

Թբիլիսիի Քաշվեթիի եկեղեցում, մինչեւ Սուրբ Գիորգիի տոնին՝ «Գիորգոբային», նվիրված տոնական պատարագի մեկնարկը, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը եկեղեցում հավաքվածներին շնորհավորեց տոնի կապակցությամբ եւ ընթերցեց Սենակիի եւ Չխորոծղուի միտրոպոլիտ Շիո Մուջիրին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի փոխանորդ նշանակելու մասին հրամանագիրը:

48-ամյա միտրոպոլիտ Շիո Մուջիրին հոգեւոր ծառայությունն սկսել է 1993 թ.՝ ընդունելով կուսակրոնություն: 2010 թ. դարձել է միտրոպոլիտ: 2003 թ.-ից Սենակիի եւ Չխորոծղուի միտրոպոլիտն է:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ

Բելառուսում եռօրյա պաշտոնական այցով գտնվող Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի գլխավորությամբ, նոյեմբերի 20-ին հանդիպում է ունեցել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ:

Հանդիպմանը նշվել է, որ երկու երկրների միջեւ համագործակցությունը նշանակալիորեն առաջադիմել է, ապրանքաշրջանառությունը հասել է 200 միլիոն դոլարի, թեպետ ընդգծվել է, որ առկա ներուժը լրիվությամբ չէ, որ օգտագործվում է:

Հանդիպմանը քննարկվել է նաեւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի՝ 2018թ. սկզբներին Վրաստան ծրագրված այցի նախապատրաստման հարցը:

ԹԵՅՄՈՒՐԱԶ ԿՈՒՊԱՏԱԶԵՆ՝ ՊԱՐԵԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Գախարիան գնդապետ Թեյմուրազ Կուպատաձեին նշանակել է պարեկային ոստիկանության դեպարտամենտի պետ: Այդ պաշտոնում Կուպատաձեն փոխարինեց Ալեքսանդր Խվադագարուն:

Նշենք, որ Թեյմուրազ Կուպատաձեն 13 տարի աշխատում է պարեկային ոստիկանությունում, մինչ այդ աշխատել է Շիդա Քարթլիի, Քվեմո Քարթլիի, Իմերեթիի, Մցխեթա-Մթիանեթիի երկրամասային վարչություններում:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(24 նոյեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.695	2.74
ԵՎՐՈ	3.126	3.271
ՌՈՒԲԼԻ	0.043	0.050
ԴՐԱՄ	0.0042	0.0061

Նոյեմբերի 17-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,035 լարիով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Նոյեմբերի 20-ին Ախալքալաքիում տեղի ունեցավ նորընտիր սակրեբուլոյի առաջին նիստը:

Նիստում Ախալքալաքիի Ընտրական հանձնաժողովի նախագահ Հասմիկ Մառանգոզյանը ներկայացրեց ընտրությունների արդյունքները, ըստ որոնց Ախալքալաքիի սակրեբուլոյում ներկայացված է 4 կուսակցություն. «Եվրոպական Վրաստանը» եւ «Ազատ Վրաստանն» ունեն մեկական պատգամավոր, «Հայրենասերների դաշինքը»՝ հինգ, իսկ «Վրացական երազանքը»՝ 31: Սակրեբուլոյի կազմում է 38 պատգամավոր, որից 23-ը՝ մեծամասնական ընտրակարգով ընտրված, իսկ 15-ը՝ կուսակցական ցուցակներով:

Նախագահի պաշտոնի համար «Վրացական երազանքը» առաջադրեց Նաիրի Իրիցյանի, իսկ «Հայրենասերների դաշինքը»՝ Զաքար Զաքարյանի թեկնածությունները: Փակ ու գաղտնի քվեարկության արդյունքում, նիստին ներկա պատգամավորներից 30-ը քվեարկեց Նաիրի Իրիցյանի, իսկ 7-ը՝ Զաքար Զաքարյանի օգտին: Սակրեբուլոյի փոխնախագահ ընտրվեց «Վրացական երազանքի» թեկնածու Ռոբինզոն Կավրելիշվիլին՝ 34 կողմ, 3 դեմ ձայներով:

Նիստի ավարտին, պատգամավորները հաստատեցին սակրեբուլոյի աշխատանքային կանոնակարգը:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ Նինոծմինդայի շրջանի սակրեբուլոյի առաջին նիստը: Նիստի մեկնարկին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Սեյրան Կյուրեղյանը ներկայացրեց ընտրությունների արդյունքները:

Նորընտիր պատգամավորների լիազորությունների հաստատումից հետո, ըստ օրենքով սահմանված կարգի, պատգամավորները ձեռնամուխ եղան սակրեբուլոյի նախագահի ընտրությանը: Գաղտնի քվեարկությամբ սակրեբուլոյի 26 պատգամավորներից 25-ը նախագահի պաշտոնում պաշտպանեցին սակրեբուլոյի նախկին նախագահ, «Վրացական երազանք» կուսակցության կողմից ներկայացված Սմբատ Կյուրեղյանի թեկնածությունը:

Անդրանիկ նիստում ձեւավորվեց նաեւ սակրեբուլոյի «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» խմբակցությունը:

Սակրեբուլոյի վերընտրված նախագահ Սմբատ Կյուրեղյանն իր երախտագիտությունը հայտնեց Նինոծմինդայի շրջանի բնակչությանը «Վրացական երազանք» կուսակցության օգտին քվեարկելու եւ վստահություն դրսեւորելու համար:

Սակրեբուլոն կանցկացնի արտահերթ նիստ, որտեղ կընտրվեն հանձնաժողովների եւ խմբակցությունների նախագահներ:

ԱԽԱԼՑԻԽԵ

Նոյեմբերի 20-ին անցկացվեց Ախալցիխեի մունիցիպալիտետի նորընտիր սակրեբուլոյի առաջին նիստը, որին ներկա էին սակրեբուլոյի 33 անդամներից 31-ը:

Նորընտիր պատգամավորների լիազորությունների հաստատումից հետո, նրանք ձեռնամուխ եղան սակրեբուլոյի նախագահի, նրա տեղակալների ընտրությանը: Ձայների մեծամասնությամբ (27 կողմ) Ախալցիխեի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ ընտրվեց «Վրացական երազանքի» թեկնածու Գելա Նոզաձեն: Փոխնախագահի պաշտոնում հաստատվեց կառավարող կուսակցության ներկայացուցիչ Իոսեբ Կապանաձեն:

ԱՍՊԻՆՁԱ

Նոյեմբերի 20-ին իր անդրանիկ նիստն անցկացրեց նաեւ Ասպինձայի մունիցիպալիտետի նորընտիր սակրեբուլոն: Նշենք, որ, ընտրությունների արդյունքներով, սակրեբուլոյում, 27 անդամների թվում ներկայացված են կառավարող կուսակցության 22 եւ ընդդիմության, համամասնական ցուցակով ընտրված 5 պատգամավոր:

Անդրանիկ նիստում, նորընտիր պատգամավորների լիազորությունների հաստատումից հետո, պատգամավորները միաձայն սակրեբուլոյի նախագահի պաշտոնում հավանություն տվեցին կառավարող կուսակցության ներկայացուցիչ Մամուկա Մելիքիձեի թեկնածությանը: Նույնպես միաձայն, սակրեբուլոյի փոխնախագահի պաշտոնում ընտրվեց նույն կուսակցության կողմից առաջադրված Բեսիկ Բերիձեն:

ԲՈՐԺՈՄԻ

Նոյեմբերի 20-ին Բորժոմիի նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ նիստը, որը շարունակվեց շուրջ ինը ժամ, անցավ աղմուկի եւ դիմակայության իրավիճակում:

Պատգամավորները հաստատեցին նիստի օրակարգը, որը ներառում էր սակրեբուլոյի նախագահի ընտրությունը, մանդատային եւ հաշվիչ հանձնաժողովների ձեւակերպումը:

Պատգամավորների միջեւ դիմակայության պատճառը վերոնշյալ հանձնաժողովների անդամների ընտրությունն էր: Նիստում հայտարարված ընդմիջմանը, կառավարող եւ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչ պատգամավորների միջեւ փոխզիջման շնորհիվ, հանձնաժողովների նախագահներ ընտրվեցին ընդդիմության ներկայացուցիչները: Թեպետ դա հանգեցրեց նրան, որ կառավարող կուսակցության պատգամավորները թողեցին նիստերի դահլիճը: Ընդդիմությունը ներկայացնող 15 պատգամավորները որոշեցին շարունակել նիստը, քննարկել օրակարգով նախատեսված հարցերը Մասնավորապես, ձեւակերպեցին ընդդիմադիր երկու «Հայրենասերների ալյանս» եւ «Ազգային շարժում» կուսակցությունների խմբակցությունները:

Ինչ վերաբերում է կառավարող «Վրացական երազանքից» սակրեբուլո ընտրված պատգամավորներին, ապա, նրանց հայտարարությամբ, միայն ընդդիմությունով համալրված սակրեբուլոն օրինական չէ: Ավելին, ինչպես նշեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչները, սակրեբուլոյի նիստում նորընտիր պատգամավորների լիազորությունները չեն հաստատվել:

ՄԱՌՆԵՈՒԼԻ

Նոյեմբերի 20-ին հրավիրվեց Մառնեուլիի մունիցիպալիտետի վեցերորդ գումարման սակրեբուլոյի անդրանիկ նիստը: Նիստին մասնակցեց Մառնեուլիի նորընտիր քաղաքապետ Թեմուր Աբազովը:

Նորընտիր պատգամավորների լիազորությունների հաստատումից հետո, սակրեբուլոյի պատգամավորները ձեռնամուխ եղան նախագահի ընտրությանը: Գաղտնի քվեարկության արդյունքում, Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ ընտրվեց «Վրացական երազանքի» կողմից ներկայացված Ամիրան Գիորգաձեն, իսկ փոխնախագահ՝ Մամուկա Նավերիանին:

Նշենք, որ հոկտեմբերի 21-ի ընտրությունների արդյունքներով Մառնեուլիի սակրեբուլոյի պատգամավորի մանդատ են ստացել «Վրացական երազանքի» 31 ներկայացուցիչ (20-ը՝ մեծամասնական, 11-ը՝ համամասնական ընտրակարգով), երեք մանդատ բաժին է ընկել «Եվրոպական Վրաստանին», եւս մեկ մանդատ՝ «Ազգային շարժմանը»:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՁԵՄՈՍԱՎԼԵԳՈՒՆ ՍԱՄՍԱԽՇՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԲԵԼԱՌՈՒՍ

Նոյեմբերի 16-17-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պատվիրակությունը, որի կազմում էին ծառայության պետի տեղակալներ Վախթանգ Լաշքարաձեն, Իրակլի Շարտավան, միջազգային հարաբերությունների դեպարտամենտի պետ Սամսոն Ուրիդիան, Բելառուսի պետական մաքսային կոմիտեի նախագահ Յուրի Սենկոյի հրավերով, գտնվում էր Մինսկում:

Այցի շրջանակներում, կողմերը ստորագրեցին Վրաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ երկկողմ առեւտրի խրախուսման համակարգի մասին համաձայնագիր, նաեւ ձեւակերպվեց կադրերի նախապատրաստման ոլորտում համագործակցության 2018-2019 թթ. գործողության ծրագիրը:

Վրաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ երկկողմ առեւտրի խրախուսման համակարգի մասին համաձայնագրի հիմնական նպատակը երկու երկրների միջեւ առեւտրի խրախուսումն ու անվտանգության համակարգի զարգացման ապահովումն է: Միաժամանակ, վերոնշյալ համաձայնագիրն առավելագույնս դյուրացնում է մաքսային սահմաններով ապրանքների եւ ավտոտրանսպորտային միջոցների փոխադրումների մաքսային վերահսկողության ընթացակարգը:

Հատկանշական է, որ երկկողմ համագործակցության ձեւաչափում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պատվիրակության անդամներն առաջին անգամ պաշտոնական այցով եղան Բելառուսում, իսկ Բելառուսի մաքսային պետական կոմիտեի նախագահի աշխատանքային այցը Վրաստան տեղի էր ունեցել ընթացիկ տարվա փետրվարին:

ՀԱՐՅՈՒՐԻՑ ԱՎԵԼԻ ՍՏԱԺՈՐ ԿԱՆՑՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Նոյեմբերի 20-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտում հավաքվեց շուրջ 100 ստաժոր:

Ուսուցման հատուկ դասընթացի թեկնածուները, թեստավորումից եւ հարցազրույցից հետո, ընտրվեցին մրցույթի հիմունքներով:

Ստաժորները ուսումնական դասընթաց կանցնեն եկամուտների ծառայության մաքսային անցակետերում ու ձեւավորված տնտեսական գոտիներում: Դասընթացը ներառում է ինչպես գործնական, այնպես էլ՝ տեսական բաժին:

Ուսումնական դասընթացի հիմնական նպատակը միասնական կադրային քաղաքականության իրականացման համար համապատասխան կադրային ռեսուրսների ձեւավորումն է, ապագա աշխատակիցների նախապատրաստումը, նրանց մասնագիտական զարգացումը, գործնական ունակությունների, հմտությունների ուսուցանումն ու կատարելագործումը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԶԱՐԴԵՐ

Նոյեմբերի 18-ին, Սարփիի մաքսային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները բացահայտել են ապօրինաբար երկրի տարածք չհռչակագրված ոսկե եւ արծաթե զարդերի ներբերման փաստ: Հենվելով կասկածի վրա՝ Հունաստանի քաղաքացի Ի.Լ.-ին պատկանող բեռան ստուգման արդյունքում, հայտնաբերել են ոսկե (97,53գ) եւ արծաթե (52,33գ) զարդեր: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 7 957,68 լարի:

Վրաստանի հարկային օրենսգրքի 289 հոդվածի 10-րդ բաժնի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 7 957,68 լարի գումարով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ